

15.07.2015թ
գ.Ծաղկունք

ՔԱՂՎԱԾՔ

Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ընդհանուր ժողովի
արձանագրությունից

2015թ-ի հուլիսի 15-ին ժամը 15/00-ին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի
կուլտուրայի տան դահլիճում կայացավ Ծաղկունք համայնքի բնակիչների ընդհանուր
ժողովը:

Ժողովին ներկա են Ծաղկունք համայնքի ավագանու անդամները, բուժ-
ամբուլատորիայի աշխատակիցները, գյուղապետարանի համայնքային ծառայողները,
Արմավիրի մարզպետարանի <Տեղական ինքնակառավարման և համայնքային
ծառայության հարցերի> բաժնի պետ Գ. Հովհաննիսյանը, ինչպես նաև համայնքի
թվով 35 բնակիչներ:

Օրակարգում` Ծաղկունք համայնքի ղեկավարի հաշվետվությունը` 2015թ-ի
առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյանը ներկաներին ներկայացրեց 2015թ-ի առաջին
կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները` համայնքի բնակիչների
իրավունքների պաշտպանության բնագավառում, հանգամանորեն անդրադարձավ
նաև ֆինանսների, պաշտպանության, քաղաքաշինության և հողօգտագործման,
կոմունալ տնտեսության և բարեկարգման, տրանսպորտի, առևտրի և սպասարկման,
սոցալական ծառայության և գյուղատնտեսության բնագավառներում կատարված
աշխատանքներին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև բյուջեի եկամուտների մասով կիսամյակային
հաշվետվություն

1. վարչական բյուջեով պլանավորված 14027.3 հազ. դրամից , փաստ. 12447.7 հազ. դր
88.7%/, որից` 5640.7 հազ. դրամ սեփական եկամուտների մասով, փաստ.4061.0 հազ.
դր., /72.0%/, որից`
ա/ հողի հարկ պլ. 2600.0 հազ. դրամ, փաստ. ` 1789.7 հազ. դրամ/ 68.8% /

բ/ Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլ.2025.7 հազ. դր. , փաստ. 1128.0 հազ. դր.
/55.7%/:

գ/ Գույքահարկ շենքերի և շինությունների համար պլ. 650.0 հազ. դր. փաստ. 484.5
հազ. դր./ 74.5%/:

դ/ Տեղական տուրքերի մասով պլ. 229.0 հազ. դր. փաստ. 263.0 հազ. դր. /114.8% /:

ե/ Վարձակալական հողերի վճար պլ. 129.0 հազ. դր.փաստ. 381.7 հազ. :

Դ. Կարապետյանը նշեց նաև համայնքում առկա մի շարք հիմնախնդիրների մասին
մասնավորապես խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման,
միջհամայնքային ճանապարհների բարեկարգման, կուլտուրայի տան դահլիճի

վերանորոգման , ոռոգման ցանցում կիսախողովակների տեղադրման և մանկապարտեզի շենքի հիմնանորոգման անհրաժեշտության մասին:

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյանը համազուղացիներին խնդրեց ավելի ակտիվ մասնակցություն ունենալ համայնքում տեղական ինքնակառավարման աշխատանքներին՝ դրանով պայմանավորելով հետագայում համատեղ ձեռք բերվելիք հաջողությունները:

Իր ելույթում համայնքի ավագանու անդամ Անգին Ամիրջանյանը նշեց, որ համայնքի ղեկավարի 2015թ-ի տարեկան գործունեությունը համապատասխանում է համայնքի ֆինանսական հնարավորություններին և առաջարկեց հավանություն տալ կատարված աշխատանքներին:

Իր խոսքում Արմավիրի մարզպետարանի <Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի> բաժնի պետ Գ. Հովհաննիսյանը նույնպես կարևորեց տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը, նշելով նաև որ Արմավիրի մարզպետարանը ինչպես միշտ օգնելու է համայնքի գյուղապետարանին իր մասնագիտական գործունեության իրականացման և համայնքի ղեկավարին աջակցելու գործում:

Ժողովը դրական գնահատեց համայնքի ղեկավարի 2015թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքը:

Համայնքի հիմնախնդիրները՝

1. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգում:
2. Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:
3. Կուլտուրայի տան դահլիճի վերանորոգում:
4. Ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրում:
5. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:

Ծաղկունք համայնքի ղեկավար՝



Դ. Կարապետյան

15.07.2015թ